ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ հակակոռուպցիոն կենտրոն
TRANSPARENCY INTERNATIONAL anti-corruption center

# ANNUAL REPORT 2007

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ Ինթերնեշնլի Քաղաքացիական շահերի պաշտպանության ծրագրի և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռնության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության թիվ 111-A-00-04-000056-00 համագործակցության պայմանագրի շրջանակներում: Սույնի բովանդակության պատասխանատուն "Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն" հասարակական կազմակերպությունն է, և պարտադիր չէ, որ այն համընկնի Քաունթերփարթ Ինթերնեշնլի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Միացյալ Նահանգների կառավարության տեսակետների հետ:

This publication was made possible by the support of Counterpart International's Civic Advocacy Support Program (CASP), and the generous support of the American people through the United States Agency for International Development (USAID) under Cooperative Agreement No. 111-A-00-04-000056-00. Content expressed herein is the responsibility of the Transparency International Anti-corruption Center NGO, and does not necessarily reflect the views of Counterpart International, USAID and the United States Government

@ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն

Հայաստան, Երևան 0001, Բելյակով փ. 9
Հեռ.՝ +374-10-526914, 585578
Ֆաքս՝ +374-10-547460
info@transparency.am
www.transparency.am

Տպաքանակը՝ 150 օրինակ

@ Transparency International Anti-corruption Center

9, Belyakov Street, Yerevan 0001, Armenia
Tel: +374-10-526914, 585578
Fax: +374-10-547460
info@transparency.am
www.transparency.am

Printed copies – 150

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
# TABLE OF CONTENTS


| | | |
|---|---|---|
| Կազմակերպության մասին | 2 | About the Organization |
| Հետազոտություն/Մոնիտորինգ | 3 | Research/Monitoring |
| Իրազեկում/Շահերի պաշտպանություն | 8 | Awareness Raising/Advocacy |
| Ֆինանսական տվյալներ/Դոնորներ | 11 | Finances/Donors |
| Մասնակցություն կոնֆերանսների | 12 | Participation in Conferences |
| Գործընկերներ/Ցանցեր | 14 | Partners/Networks |
| Խորհրդի անդամներ/Աշխատակազմ | 15 | Board Members/Staff |
| Ակցիաներ/Ցույցեր | 16 | Actions/Rallies |

# ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Տարածաշրջանային զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2000թ. հուլիսին: 2001թ. հոկտեմբերից այն հավատարմագրվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» (ԹԻ) համաշխարհային հակակոռուպցիոն շարժման կողմից՝ ներկայացնելու այդ շարժումը Հայաստանում: 2006թ. կազմակերպությունը վերագրանցվել է որպես «Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսփարենսի Ինթերնեշնլ - Հայաստան» հասարակական կազմակերպություն (ՏԶԿ/ԹԻ-Հայաստան) և վերահավատարմագրվել ԹԻ կողմից 2006թ. օգոստոսին*:

Առաքելությունը՝ նպաստել արդյունավետ հանրային քաղաքականությանը և կառավարմանը՝ կանխարգելելու կոռուպցիան և ամրապնդելու ժողովրդավարությունը Հայաստանում ու տարածաշրջանում:

Նպատակները՝ խթանել թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու հանրային մասնակցությունը և աջակցել քաղաքական, տնտեսական ու սոցիալական բարեփոխումների համար բարենպաստ մթնոլորտի ստեղծմանը:

Գործունեությունը՝ անցկացնել Հայաստանում և տարածաշրջանում ընթացող քաղաքական, տնտեսական ու սոցիալական բարեփոխումների գործընթացների ընդգրկուն ուսումնասիրություն, իրականացնել հանրային քաղաքականության բարեփոխումների մոնիտորինգ և գնահատում, ինչպես նաև հանրային քաղաքականության արդյունավետությանն ուղղված շահերի պաշտպանություն ու լոբբինգ, կազմակերպել հանրային քաղաքականության և կառավարման գործընթացների վերաբերյալ հանրային իրազեկման քարոզարշավներ և զարգացնել հանրային քաղաքականության ու կառավարման գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցության համար անհրաժեշտ կարողություններ:

**2008թ. փետրվարին կազմակերպությունը վերագրանցվել է որպես «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»:*

*In February 2008, it was re-registered as "Transparency International Anti-corruption Center".*

# ABOUT THE ORGANIZATION

The organization was established in July 2000 as a local NGO - the Center for Regional Development. As of October 2001, it was granted a status of accredited National Chapter of Transparency International (TI), the global anti-corruption movement. In 2006, the organization was re-registered as the Center for Regional Development/ Transparency International Armenia NGO and re-accredited by TI in August 2006*.

Mission: to promote effective public policy and good governance in order to prevent corruption and strengthen democracy in Armenia and the region.

Goals: to foster transparency, accountability and participation, and promote an enabling environment for political, economic and social reforms.

Activities: to conduct comprehensive research on the process of political, economic and social reforms in Armenia and the region, carry out monitoring and evaluation of policy reforms, advocate and lobby for policy changes to ensure the effectiveness of reforms, launch public awareness campaigns on the public policy and governance processes, and build civil society's capacity to participate in policy-making and governance matters.



# ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

2007թ. հրատարակվեց «2006թ. հասարակական կարծիքի ուսումնասիրություն «Կոռուպցիայի ընկալումը Հայաստանում» զեկույցը, որը ֆինանսավորվել է Միավորված Ազգերի Կազմակերպության Զարգացման Ծրագրի հայաստանյան գրասենյակի կողմից և իրականացվել՝ մարդկանց հնարավորություն ընձեռելու՝ արտահայտելու կոռուպցիայի վերաբերյալ իրենց կարծիքը, առանձնացնելու առավել խնդրահարույց ոլորտները, վեր հանելու կոռուպցիոն դրսևորումները ու բացահայտելու կոռուպցիայի նվազեցմանն ուղղված հնարավոր լուծումները:

Հարցման մեթոդաբանությունը մշակվել է 2006 և 2002 թվականների սոցհարցումների տվյալների համադրելիությունն ապահովելու նպատակով: Հարցմանը մասնակցել է 1500 տնային տնտեսություն Հայաստանի 31 քաղաքային և 40 գյուղական բնակավայրերում:

2007թ. հունվարի վերջին ուսումնասիրության արդյունքները ներկայացվեցին պետական հաստատությունների, կուսակցությունների, հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին ու փորձագետներին: Հարցման տվյալները լայնորեն լուսաբանվել են մամուլում, իսկ զեկույցը բաժանվել բոլոր շահագրգիռ կողմերին:

# RESEARCH/ MONITORING

In 2007, "2006 Countrywide Survey on Public Perception on Corruption in Armenia" was published. The project was funded by United Nations Development Program Armenia Office to give people a voice for sharing their thoughts on corruption, specify problematic areas, reveal manifestations of corruption, and identify possible solutions to combat corruption

Survey methodology was developed to ensure a comparison with the similar 2002 survey. 1,500 households from 31 urban and 40 rural settlements of Armenia participated in the survey.

In the end of January 2007, the survey results were presented to representatives of state institutions, political parties, NGOs and international organizations. The survey findings were broadly covered by media and disseminated among all interested parties.





2007թ. շարունակվեց «ՀՀ Շիրակի մարզի հանրակրթության ոլորտում Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով (ԱՀՌԾ) նախատեսված միջոցառումների և դոնորական ծրագրերի մոնիտորինգ» ծրագիրը, որի նպատակն էր նպաստել Հայաստանում աղքատության նվազեցմանը՝ բարձրացնելով հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների արդյունավետությունը: Ծրագիրը ֆինանսավորվել է Օքսֆամ Մեծ Բրիտանիայի հայաստանյան գրասենյակի և Օքսամ Նիդեռլանդներ (Նովիբ) կազմակերպության կողմից:

Ծրագրի շրջանակներում կիրառվել էին մարզային մակարդակով հասարակական մոնիտորինգի տարբեր մեթոդներ, և մոնիտորինգի էին ենթարկվել Հայաստանի կառավարության կողմից հաստատված՝ ԱՀՌԾ կրթության ոլորտի նպատակային և գործնային ցուցանիշներն ու միջոցառումների իրականացման ընթացքը:

Մոնիտորինգի արդյունքներն ու դրանց վերլուծությունը շահագրգիռ կողմերին ներկայացվել են 2007թ. սեպտեմբերի վերջին Գյումրիում: Ծրագրի արդյունքում դպրոցների խորհրդի անդամների համար հրատարակվել է «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության (դպրոցի) խորհուրդ» ուղեցույցը, որը երաշխավորվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության Կրթության ազգային ինստիտուտի կողմից որպես մեթոդական ձեռնարկ և տարածվել ՀՀ բոլոր դպրոցներում՝ նպաստելու դպրոցական խորհրդի մասին հանրային իրազեկման բարձրացմանը:

"Monitoring of the Implementation of Poverty Reduction Strategy Program (PRSP) and Donor Assistance Programs in Secondary Education in Shirak Marz of Armenia" project was continued In 2007 to contribute to the reduction of poverty in Armenia through fostering effectiveness of reforms in the field of secondary education. The project was supported by Oxfam Great Britain Armenian Branch Office and Oxfam Netherlands (Novib).

The project utilized various methodologies of public monitoring at a marz level. Within the project, monitoring was conducted for outcome and output indicators of the PRSP approved by the Government of Armenia as well as for the process of implementation of measures.

Monitoring results and their analysis were presented to the stakeholders in the end of September 2007 in Gyumri. A guide "The Board of the Armenian state general secondary educational institution (school)" for the school board members, which was recommended by the National Institute of Education under the Ministry of Education and Science as a manual, was published and distributed to all the Armenian schools to promote public awareness on the school boards.



«2007թ. խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի ֆինանսավորման և «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի գնումների կանոնակարգերի ու գործընթացների թափանցիկություն» ծրագիրն անդրադարձել է խորհրդարանական ընտրություն-ների և «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի իրակա-նացմանը: Ծրագիրը ֆինանսավորվել է Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի կողմից:

Խորհրդարանական ընտրությունների մոնիտորինգի առարկան նախընտրական քարոզարշավի ընթացքում կուսակցությունների ֆինանսական հոսքերի և վարչական ռեսուրսի օգտագործումն է: Մեթոդաբանությունը ներառում է իրավական դաշտի ուսումնասիրություն, լրատվամիջոցների՝ ընտրական թեմաներով նյութերի մոնիտորինգ, և կուսակցությունների քարոզարշավային ծախսերի գնահատում Երևանում, Գյումրիում և Վանաձորում:

Մոնիտորինգի արդյունքները ներկայացվել են շահագրգիռ կողմերին 2007թ. մայիսին տեղի ունեցած մամուլի ասուլիսում և լայնորեն լուսաբանվել մամուլում: Ծրագիրը բացահայտել է նախընտրական քարոզարշավի ընթացքում կուսակցությունների ֆինանսավորման և դրա վերահսկման հետ կապված խնդիրները ու մշակել համապատասխան օրենսդրական և ենթաօրենսդրական առաջարկություններ: Հունիսին ծրագրի տվյալները ներկայացվել են ՀՀ Սահմանադրական դատարանում՝ ընդդիմության կողմից խորհրդարանական ընտրությունների արդյունքները բողոքարկելիս:

Project "Transparency of Regulations and Processes in 2007 Parliamentary Election Campaign Finance and MCA-Armenia Public Procurement" targeted the parliamentary elections and Millennium Challenge Account (MCA) - Armenia program. The project was funded by Open Society Institute Assistance Foundation – Armenia.

The monitoring of parliamentary elections campaign focused on the financial flows of political parties and the use of administrative resource. The methodology included legal review, scrutinization of media coverage for election-related news and estimation of campaign costs in Yerevan, Gyumri and Vanadzor cities.

The monitoring findings and their analysis were presented to the interested parties at the press-conference in May 2007 and broadly covered by media. The project revealed the main problems of party finance during the electoal campaign and its oversight and developed recommendations for improvement of relevant legislation and procedures. The project data were used in June 2007 by the opposition during the Constitutional Court appeal on the results of the parliamentary elections.





Գնումների մոնիտորինգի առարկան «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի (ՀՄՀ) հայաստանյան ծրագրի մոնիտորինգն է, ինչպես նաև երկրում առկա՝ գնումների գործընթացներն ընդհանուր առմամբ: Ծրագրի արդյունքում հրապարակվեց երկու զեկույց՝ «Հայաստանում հանրային գնումների համակարգի պատկերումը» և «ՀՄՀ-Հայաստանի գնումների մոնիտորինգի հաշվետվությունը»:

2007թ. դեկտեմբերին կազմակերպվել էր առաջին հրապարակման շնորհանդեսը, որին հրավիրվել էին ՀՀ պետական կառույցների, միջազգային եւ հասարակական կազմակերպությունների, գիտակրթական հիմնարկների եւ լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Ուսումնասիրության հիմնական նպատակն էր կոռուպցիոն ռիսկերի բացահայտումը եւ առաջարկությունների ներկայացումը՝ նպաստելու գնումների գործընթացի թափանցիկությանը: Հետազոտությունն իրականացվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» միջազգային հակակոռուպցիոն շարժման կողմից մշակված մեթոդաբանության համաձայն, որը ներառել է ինստիտուցիոնալ, ընկալման, կատարողականի եւ ընդհանուր միջավայրի գնահատման ցուցանիշներ:

Երկրորդ զեկույցը նվիրված է ՀՄՀ- Հայաստանի կողմից իրականացված գնումների գործընթացների թափանցիկության ուսումնասիրությանը եւ անդրադարձել է տեղեկատվության մատչելիության, մրցակցային հնարավորությունների, շահերի բախման, բողոքարկման մեխանիզմների ու այլ հարցերին: Զեկույցը, կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու առաջարկների հետ միասին, ներկայացվել է շահագրգիռ կողմերին:

The monitoring of public procurement concentrated on the respective operations of MCA-Armenia as well as on public procurement practices at national level. The project resulted in two publications: “Mapping Public Procurement System in Armenia” and “MCA-Armenia Procurement Monitoring Report”.

In December 2007, the presentation of the first publication was organized with participation of representatives of state structures, international organizations, NGOs, educational institutions and media. The study was aimed at revelation of corruption risks and development of recommendations to increase the transparency of procurement processes in the country. The assessment was conducted in accordance with the methodology developed by Transparency International, which included review of institutional, perception, performance and context indicators.

The second publication was devoted to the study of transparency of procurement procedures of MCA-Armenia and reflected on access to information, competitive opportunities, conflict of interests, complain mechanisms, and other issues. The report, along with recommendations directed at reducing corruption risks, was send to interested parties.



2007թ. Բաց Հասարակության Ինստիտուտի Աջակցության Հիմնադրամի Բուդապեշտի գրասենյակի կողմից կազմակերպությանը շնորհվել է Ինստիտուցիոնալ աջակցության դրամաշնորհ, որի նպատակն է օժանդակել կազմակերպության ընթացիկ գործունեությանը՝ վերահսկելու ազգային արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականության ընդունման ու իրականացման գործընթացը եւ Հայաստանի՝ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ստանձնած միջազգային պարտավորությունների (ԵՀՔ, ԳՐԵԿՈ, ՄԱԿ եւ այլ) կատարումը:

Ծրագիրն աջակցում է հակակոռուպցիոն քաղաքականության վերանայմանը եւ առավել արդյունավետ կիրառմանը, ուղղված է կազմակերպության մոնիտորինգի իրականացմանը, ինչն, իր հերթին, նպաստում է այդ ուղղությամբ տարվող շահերի պաշտպանությանն ու իրազեկության բարձրացման գործունեությանը:

Ծրագրի արդյունքում ակնկալվում է, որ նոր հակակոռուպցիոն ռազմավարությունը ի մի կբերի կազմակերպության առաջարկությունները՝ ներառելով կոռուպցիայի բացահայտմանն ու հանրային աջակցությանը, ինչպես նաեւ կանխարգելմանն ուղղված միջոցառումները: Ծրագիրը կբարձրացնի նաեւ ՀՀ կառավարության հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման վերաբերյալ իրազեկության եւ հրապարակայնության աստիճանը: Ակնկալվում է, որ առանձին ոլորտների մոնիտորինգի արդյունքներով ուղղորդված՝ շահերի պաշտպանությունը կբերի համապատասխան օրենսդրական եւ ենթաօրենսդրական փոփոխությունների՝ ընտրական, պետական գնումների, բնապահպանության եւ քաղաքաշինության ոլորտներում:

In 2007, Institutional Support Grant was provided to the organization by Open Society Institute Assistance Foundation Budapest Office to assist its ongoing activities in playing the role of a major watchdog for adoption and implementation of an effective national anti-corruption policy and compliance of Armenia's international obligations in the field of anti-corruption (ENP, GRECO, UNCAC, etc.).

The project supports the monitoring efforts of the organization to direct the advocacy and awareness-raising tasks targeted at improvement and more effective implementation of the anti-corruption policy.

The project is expected to have a new anti-corruption strategy, incorporating the organization's recommendations and including detection and public support measures, along with the preventive ones. It will also lead to the increased public awareness and publicity of the performance of the Armenian government on implementation of the anti-corruption policy. It is expected that avocacy efforts of the organization based on the monitoring of certain fields such as elections, public procurement, environment and urban development will bring appropriate legislative and procedural changes.





## ԻՐԱԶԵԿՈՒՄ/ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2007թ. սկիզբ դրվեց «Իմ հարցը ապագա նախագահին» ծրագրին, որի նպատակն էր խթանել Հայաստանում երիտասարդ սերնդի քաղաքական մտքի զարգացումն ու մասնակցությունը հասարակական կյանքին: Նախատեսվում էր կազմակերպել Երեւանի, Գյումրիի, Վանաձորի ու Գորիսի ավագ դպրոցների աշակերտների եւ 2008թ. նախագահական ընտրությունների մասնակցող թեկնածուների հետ անդրանիկ հեռուստահաղորդումներ, որոնց ընթացքում աշակերտներն առիթ կունենան մեկական հարց ուղղել երկրի «ապագա նախագահին»: Ծրագիրը ֆինանսավորվել է Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանության կողմից:

Ծրագրի ակնկալվող արդյունքներն են Ժողովրդավարական արժեքների խթանումը Հայաստանում՝ առաջիկա նախագահական ընտրությունների նախաշեմին, ներգրավելով երիտասարդությանը մասնակցային գործընթացներում, եւ հեռուստատեսային քաղաքական ծրագրերի շարքը հարստացնելը նորարարական քարոզչական տարրով: Նախատեսվում է դպրոցական մասնակիցներին ընտրել մրցույթի միջոցով, հեռուստահաղորդումներին հրավիրել բոլոր գրանցված թեկնածուներին եւ պատրաստված հաղորդումները հեռարձակել Երեւանում, Գյումրիում, Վանաձորում ու Գորիսում:

## AWARENESS RAISING/ ADVOCACY

Project entitled "My Question to Future President" started in 2007 to promote political thinking and participation among young generation in Armenia. It was aimed at organizing first ever TV shows with high school students from Yerevan, Gyumri, Vanadzor and Goris and presidential candidates, during which the students will be given an opportunity to ask one question to a "Future President". The project was funded by the British Embassy in Armenia.

The expected outcomes of the project are promotion of democratic values on the threshold of the upcoming presidential elections in Armenia by getting youth involved in participation processes, helping the public understand the basic elements of free and fair elections, and enriching TV political programming via introduction of an innovative campaign element. It was planned to select school students through a competition, invite all presidential candidates to participate in the programs, and broadcast the latter in Yerevan, Gyumri, Vanadzor and Goris.



Կազմակերպությունը շարունակել է Հայաստանում առավել արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականության խթանմանն ուղղված շահերի պաշտպանությունը, որը ֆինանսավորվել է ԱՄՆ ՄԶԳ-ի/ Քաունթերփարթ Ինթերնեշնլի Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի կողմից:

Այս ծրագիրը միտված է նոր հակակոռուպցիոն ռազմավարությունում եւ դրա միջոցառումների ցանկում հասնելու անհրաժեշտ փոփոխությունների, որոնց ընդունումը կնպաստի երկրում կոռուպցիայի նվազեցման ռազմավարական խնդրի լուծմանը: Դրան հասնելու ճանապարհներն են. ՀՀ կառավարության հակակոռուպցիոն գործունեության, եւ, մասնավորապես, Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների (ԵՀՔ, ԳՐԵԿՈ, ՄԱԿ և այլն) կատարման գնահատումը, հակակոռուպցիոն քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերին վերաբերող կոնկրետ առաջարկությունների մշակումն ու հրապարակումը, ինչպես նաև հանրության իրազեկումը վերընշվածի մասին եւ ճնշման գործադրումը իշխանությունների վրա՝ ապահովելու հակակոռուպցիոն քաղաքականության փոփոխությունը:

Ակնկալվող արդյունքներն են՝ նշված փաստաթղթերի համապատասխանեցումը միջազգային չափանիշներին և կանխարգելիչ միջոցառումներից բացի՝ կոռուպցիայի բացահայտմանը, դատապարտմանն ու հանրային աջակցությանն ուղղված միջոցառումների ընդգրկումը, ինչպես նաև կոռուպցիային առնչվող հարցերի վերաբերյալ հանրության իրազեկման բարձրացումը:

The organization continued its advocacy for more effective anti-corruption policy in Armenia, which was supported by USAID/Counterpart International Civic Advocacy Support Program.

The goal of the advocacy campaign is to ensure necessary changes in the new anti-corruption strategy and its action plan, which will promote a solution of the strategic objective to reduce corruption in the country. It can be achieved via assessment of the performance of the Armenian government, particularly, enforcement of the country's international anti-corruption obligations (ENP, GRECO, UNCAC, etc.), developing and publicizing concrete recommendations on the anti-corruption policy documents, as well as increasing public awareness concerning all mentioned above and exercizing pressure on decision makers to adopt the proposed changes to anti-corruption policy.

It is expected that the advocacy campaign will lead to adoption of the mentioned policy documents in accordance with international standards and incorporation of detection, public support, along with preventive anti-corruption measures, as well as promotion of public awareness on anti-coruption matters.





2007թ. կազմակերպությունն իր գործընկեր ՀԿ-ների հետ միասին նախաձեռնել է մամուլի ասուլիսներ՝ ահազանգելու մարդու իրավունքների պաշտպանության, բնապահպանության, մամուլի ազատության, ընտրական գործընթացների, քաղաքաշինության, տեղական ինքնակառավարման և այլ ոլորտներում տիրող իրավիճակի մասին: Համատեղ կազմակերպվել են նաև 10-ից ավելի բողոքի ցույցեր, հավաքներ և այլ հանրային միջոցառումներ՝ նվիրված վերոհիշյալ ոլորտների հիմնախնդիրներին:

Նույն ժամանակահատվածում կազմակերպությունը շարունակել է իր գործունեությունը՝ բարձրացնելու քաղաքացիների իրազեկությունը արդյունավետ ղեկավարման և կոռուպցիային առնչվող հարցերի վերաբերյալ: Կազմակերպության փորձագետները մասնակցել են մոտ 25 հեռուստատեսային և ռադիոհաղորդումների ու հարցազրույցների: Նրանք ելույթներ են ունեցել ու դասախոսություններ կարդացել ավելի քան 25 միջոցառումների ժամանակ Հայաստանում և արտերկրում: Դպրոցականների, ուսուցիչների, բուհերի ուսանողների և դասախոսների, պետական ու մասնավոր հատվածների, հասարակական կազմակերպությունների ու կուսակցությունների, ինչպես նաև միջազգային հաստատությունների և մամուլի ներկայացուցիչների համար:

Հանդիպումներ են կայացել մի շարք երկրների կառավարությունների ու միջազգային կազմակերպությունների, ներառյալ՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի, Շվեյցարիայի, Շվեդիայի, Եվրամիության և Եվրախորհրդի, Համաշխարհային բանկի, ՆԱՏՕ-ի, ԵԱՀԿ-ի, «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիայի պատվիրակությունների հետ՝ ներկայացնելու կազմակերպության տեսակետը Հայաստանում տիրող իրավիճակի և մասնավորապես՝ կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ:

Կազմակերպությունն իր ներդրումն է ունեցել «Ֆրիդոմ Հաուս»-ի՝ Անցումային շրջանի պետություններ, ԱՄՆ դեսպանատան Հայաստանում մարդու իրավունքների մասին և այլ զեկույցներում:

Կազմակերպվել են մի շարք աշխատանքային հանդիպումներ խորհրդարանական և արտախորհրդարանական կուսակցությունների հետ՝ քննարկելու կազմակերպության կողմից մշակված ընտրական քարոզարշավի ֆինանսավորմանը վերաբերող օրենսդրական փոփոխությունները:

Կազմակերպության փորձագետը ներգրավված է եղել Հայաստանի 2008-12թթ. հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի նախագծման աշխատանքների կատարման տեխնիկական առաջադրանքի մշակման գործում:

In 2007, the organization initiated a series of press-conferences, together with its partner NGOs, to express concerns about the situation in the fields of human rights protection, environment, freedom of media, electoral processes, urban development, local self-governance, etc. More than 10 protests, rallies and other public actions were organized to address the critical issues in the mentioned fields.

Through the same period, the organization continued its activities towards raising awareness of citizens on good governance and corruption matters. The organization's experts participated in more than 25 TV and radio programs, and interviews. They held lectures and presentations at more than 25 events which took place in Armenia, and abroad. The audience was school and university students, and their professors, representatives of public and private sectors, NGOs and political parties, and international institutions and media.

Meetings were held with representatives of foreign governments and international organizations, including the US, British, Swiss, Sweden, European Commission and Council of Europe, the World Bank, NATO, OSCE, Millennium Challenge Corporation, etc. to present the organization's view on the situation in Armenia, particularly, in the filed of anti-corruption.

The organization had its input in Freedom House Nations in Transit, US Embassy Human Rights Report on Armenia and other publications.

Consultations were organized with some parliamentary and non-parliamentary parties to discuss the legislative proposals developed by the organizations on electoral campaign finance. The organization's expert was involved in drafting the terms of references for a new Anti-corruption Strategy for Armenia.



# ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ/ԴՈՆՈՐՆԵՐ FINANCES/DONORS

## 2007թ. եկամուտներն ըստ դոնորների (ՀՀ դրամով)*
## 2007 Revenues by Donors (in AMD)




| | |
|---|---|
| ОՔՍՖԱՄ Մեծ Բրիտանիա հայաստանյան գրասենյակի և ՕՔՍՖԱՄ Նիդեռլանդներ (Նովիբ)<br>Oxfam Great Britain Armenian Branch Office and Oxfam Netherlands (Novib) | 12,711,186.00 |
| ԱՄՆ ՄԶԳ-ի Շահերի պաշտպանության աջակցության ծրագիր, Քաունթերփարթ Ինթերնեշնլ<br>USAID Civic Advocacy Support Program, Counterpart International | 27,986,860.00 |
| ՄԱԿ-ի զարգացման ծրագրի գրասենյակը Հայաստանում<br>UNDP Office in Armenia | 8,762,360.00 |
| Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղ<br>Open Society Institute Assistance Foundation - Armenia | 26,600,176.00 |
| Բաց հասարակության ինստիտուտ, Բուդապեշտ<br>Open Society Institute, Budapest | 21,729,680.00 |
| Մեծ Բրիտանիայի դեսպանատունն Երևանում<br>British Embassy in Yerevan | 9,366,000.00 |
| | **107,156,262.00** |

## 2007թ. ծախսերը ըստ տեսակների ՀՀ դրամով)
## 2007 Expenditures by Categories (in AMD)




| | |
|---|---|
| Աշխատակազմի և պայմանագրային աշխատողների համախառն աշխատավարձ<br>Staff and Service Contractors Gross Salaries | 44,241.234.00 |
| Գործատուի սոցիալական ապահովության վճարումներ<br>Employer Social Security Paid Liabilities | 4,737.733.00 |
| Ծրագրային ծախսեր<br>Program Costs | 19,506.828.00 |
| Վարչական ծախսեր<br>Administration Costs | 10,369.132.00 |
| Հիմնական միջոցներ<br>Fixed Assets | 269.398.00 |
| | **79,124.325.00** |

* 1 ՀՀ դրամը = 304.22 ԱՄՆ դոլլար
1 AMD = 304.22 USD

* 1 ՀՀ դրամը = 446.96 ԵՎՐՈ
1 AMD = 446.96 EUR

# ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԻՆ

# PARTICIPATION IN CONFERENCES

Քննարկում «Հայաստանում տիրող իրավիճակի քաղաքացիական հասարակության գնահատականը»
Գործընկերություն հանուն բաց հասարակության
Երեւան, Հայաստան
Փետրվար 2007թ.

Discussion “Civil Society Assessment of the Situation in Armenia”
Partnership for Open Society Initiative
Yerevan, Armenia
February 2007

---

Կոնֆերանս «Պետական հատվածի թափանցիկության, հաշվետվողականության եւ օրինականության խթանումը Արեւմտյան Բալկաններում»
Բաց հասարակության հիմնադրամ - Սերբիա
Բելգրադ, Սերբիա
Մարտ 2007թ.

Conference “Fostering Transparency, Accountability and Public Integrity in the Western Balkans”
Fund for an Open Society-Serbia
Belgrade, Serbia
March 2007

---

Համաժողով «Հասարակական կազմակերպությունների դերը հանրային քաղաքականության ձեւավորման գործընթացում»
Քաունթերփարթ Ինթերնեշնլի Քաղաքացիական Շահերի Պաշտպանության Աջակցության ծրագիր
Երեւան, Հայաստան
Ապրիլ 2007թ.

Conference “The Role of NGOs in the Public Policy Process”
Counterpart Internationale`s Civic Advocacy Support Program
Yerevan, Armenia
April 2007

---

«Քաղաքական կուսակցություններ. տեսակետներ, մոտեցումներ» հրապարակման շնորհանդես
Գործընկերություն հանուն բաց հասարակության
Երեւան, Հայաստան
Մայիս 2007թ.

Presentation of “Political Parties - Viewpoints and Approaches” Publication
Partnership for Open Society Initiative
Yerevan, Armenia
May 2007

---

«Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների մոնիտորինգ - 2006» զեկույցի շնորհանդես
«Երեւանի մամուլի ակումբ» ՀԿ
Երեւան, Հայաստան
Հունիս 2007թ.

Presentation of “Monitoring of Democratic Reforms in Armenia-2006” Report
Yerevan Press Club NGO
Yerevan, Armenia
June 2007

---

Սեմինար «Տեղեկատվության մատչելիության եւ կոռուպցիայի դեմ պայքար»
Բաց հասարակության ինստիտուտ
Նավասերադա, Իսպանիա
Հուլիս 2007թ.

Workshop “Access to Information/Anti-Corruption”
Acess Info Europe/Open Society Institute
Navacerrada, Spain
July 2007

---

Կլոր սեղան «2007թ. խորհրդարանական ընտրությունները. արդյունքներ եւ առաջարկություններ»
«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» ՀԿ
Երեւան, Հայաստան
Սեպտեմբեր 2007թ.

Round Table “Parliamentary Elections 2007: Findings and Recommendations”
Collaboration for Democracy NGO
Yerevan, Armenia
September 2007

| | |
|---|---|
| Կոնֆերանս «Արտաքին ֆինանսավորման նոր միջոցներ՝ քաղաքացիական հասարակության նոր հնարավորություններ ԵՄ հարեւանության համար»<br>Եվրոպական քաղաքացիական գործողության ծառայություն<br>Բրյուսել, Բելգիա<br>Հոկտեմբեր 2007թ. | Conference “New External Financial Instruments - New Opportunities for Civil Society in the EU Neighborhood”<br>European Citizen Action Service<br>Brussels, Belgium<br>October 2007 |
| Թրանսփարենսի Ինթերնեշնլ-ի միջազգային կոնֆերանս եւ տարեկան համաժողով<br>Թրանսփարենսի Ինթերնեշնլ Բեռլինյան գրասենյակ<br>Բալի, Ինդոնեզիա<br>Հոկտեմբեր 2007թ. | Transparency International Annual International Conference and Membership Meeting<br>Transparency International Secretariat, Berlin<br>Bali, Indonesia<br>October 2007 |
| Սեմինար «Սոցիալական հաշվետվողականության մեխանիզմների իրական պահանջարկի ստեղծումը»<br>Համաշխարհային Բանկ<br>Փարիզ, Ֆրանսիա<br>Նոյեմբեր 2007թ. | Workshop “Generating Genuine Demand with Social Accountability Mechanisms”<br>The World Bank<br>Paris, France<br>November 2007 |
| Համաժողով «Հայաստանի ազգային հակակոռուպցիոն նոր ռազմավարության մշակումը»<br>«ԿԱՍԱԼՍ»-ի «Հակակոռուպցիոն գործունեության մոբիլիզացում» ծրագիր<br>Երեւան, Հայաստան<br>Նոյեմբեր 2007թ. | Launching Conference on the Development of the New National Anticorruption Strategy<br>CASALS’ Mobilizing Action against Corruption Activity’ Program<br>Yerevan, Armenia<br>November 2007 |
| Սեմինար «Քաղաքացիական հասարակության՝ Եվրոպական հարեւանության քաղաքականության Գործողությունների ծրագրով 2007թ. նախատեսված միջոցառումների վերլուծությունը»<br>Գործընկերություն հանուն բաց հասարակության<br>Երեւան, Հայաստան<br>Նոյեմբեր 2007թ | Workshop “Civil Society Assessment of Government Decision of ENP Action Plan Implementation Tools for 2007”<br>Partnership for Open Society Initiative<br>Yerevan, Armenia<br>November 2007 |
| Կոնֆերանս «Եվրոպական ԷԿՈ ֆորում Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության ընթացակարգեր»<br>Եվրոպական ԷԿՈ ֆորում<br>Ժնեւ, Շվեյցարիա<br>Նոյեմբեր 2007թ. | European ECO Forum on Aarhus Convention Compliance Procedures<br>European ECO Forum<br>Geneva, Switzerland<br>November 2007 |

# ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ/ՑԱՆՑԵՐ

Էկոլոգիական հասարակական դաշինք
«Դեպի Հայք» ՀԿ
«Երևանի մամուլի ակումբ» ՀԿ
«Ընտրությունը քոնն է» ՀԿ
«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ
«Ինթերնյուս» մամուլի աջակցության ՀԿ
«Համագործակցություն հանուն բաց հասարակության» նախաձեռնություն
«Հայաստանի հելսինկյան կոմիտե» ՀԿ
«Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ
Հելսինկյան քաղաքացիների ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
«Պետական կարիքների զոհեր» ՀԿ
«Սեփականության իրավունքների պաշտպանություն» ՀԿ
«Սկսելա» երիտասարդական նախաձեռնող խումբ
«Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» ՀԿ
Քաղաքացիական հասարակության ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի սատարողների գլոբալ կոալիցիա

# PARTNERS/NETWORKS

Environmental Public Alliance
“Birthright Armenia” NGO
“Yerevan Press Club“ NGO
“It’s Your Choice” NGO
“Asparez” Journalists Club NGO
“Internews” Media Support NGO
“Partnership for Open Sociaty” Initiative

“Helsinki Committee of Armenia“NGO
“Association of Communities Finance Officers“ NGO
Helsinki Citizens’ Assembly Vanadzor Office

“Victims of State Needs” NGO
“Protection of the Property Rights” NGO

“Sksela” Youth Initiative Group
“Committee to Protect Freedom of Expression“ NGO
Global Coalition of Civil Society Friends of UNCAC



## ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Ամալյա Կոստանյան, նախագահ
Հակակոռուպցիան հարցերով խորհրդատու,
ՏԶԿ/ԹԻ-Հայաստան

Վարուժան Հոկտանյան, փոխնախագահ
Հանրային քաղաքականության հարցերով փորձագետ,
ՏԶԿ/ԹԻ-Հայաստան

Լիլիթ Հակոբյան
Միջազգային հարաբերությունների հարցերով փորձագետ, Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոն

Վազգեն Կարապետյան
Ծրագրի ավագ պատասխանատու, «Եվրասիա» հիմնադրամի Հարավային Կովկասում համագործակցության ծրագիր

Արթուր Լալայան
Իրացման և մարքեթինգի տնօրեն, «Սոլարէն» ՍՊԸ
Գլխավոր տնօրեն, «ԶոդՈւինդ» ՓԲԸ

## BOARD MEMBERS

Amalia Kostanyan, Chair
Anti-corruption Consultant,
CRD/TI Armenia

Varuzhan Hoktanyan, Vice-Chair
Public Policy Expert,
CRD/TI Armenia

Lilit Hakobyan
Researcher on International Affairs Issues, Center for European Law and Integration

Vazgen Karapetyan
Senior Program Coordinator, Eurasia Foundation South Caucasus Cooperation Program

Artur Lalayan
Marketing and Sales Manager, SolarEn LLC
General Manager, ZodWind CJSC

## ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Սոնա Այվազյան
Գործադիր տնօրեն

Շահեն Շահինյան
Գլխավոր հաշվապահ

Ամալյա Կոստանյան
Հակակոռուպցիոն հարցերով խորհրդատու

Վարուժան Հոկտանյան
Հանրային քաղաքականության հարցերով փորձագետ

Վախթանգ Սիրադեղյան
Լրատվամիջոցների հարցերով պատասխանատու/ Մոնիտորինգային խմբի համակարգող

Նունե Այդինյան
Տեղեկատվության հարցերով պատասխանատու

Իրինա Կարապետյան
Ծրագրի օգնական

Արմեն Բոյաջյան
Պրակտիկանտ

Ինեսսա Պետրոսյան
Պրակտիկանտ

## STAFF

Sona Ayvazyan
Executive Director

Shahen Shahinyan
Chief Accountant

Amalia Kostanyan
Anti-corruption Consultant

Varuzhan Hoktanyan
Public Policy Expert

Vakhtang Siradeghyan
Media Specialist/Monitoring Team Coordinator

Nune Aydinyan
Information Specialist

Irina Karapetyan
Project Assistant

Armen Boyajian
Intern

Inessa Petrosyan
Intern

# ԱԿՑԻԱՆԵՐ/ՑՈՒՅՑԵՐ

# ACTIONS/RALLIES

















WWW.TRANSPARENCY.AM

ԵՐԵՎԱՆ

2008

YEREVAN